

---

---

**«ԿՅԱՆՔ» ԻՄԱՍՏՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ  
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ**

ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Զ.

Պատկերավորությունը լեզվական երևույթ է, որ դրսևորվում է ոչ միայն բառերում, այլ նաև դարձվածքային միավորներում: Դարձվածքում ի հայտ եկող պատկերը այլաբանորեն է բնութագրում իմաստը: Այստեղ կարևորվում է նաև մեկ այլ հասկացություն՝ պատկերավոր պատճառաբանվածությունը: Սա այն փոխաբերական իմաստն է, որը հիմք է դարձել տվյալ դարձվածքային միավորի առաջացման համար, ապա հետագայում խամրել է, ինչպես այն դարձվածքներում, որոնց բաղադրիչները գրկվել են իրենց առաջնային իմաստից<sup>1</sup>:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում գլուխ, աչք, սիրտ և արյուն բառերը պարունակող դարձվածքային միավորների զուգադրական ուսումնասիրության հիման վրա փորձենք պարզել, թե ինչ պատկերներ են ընկած հիշյալ դարձվածքների հիմքում, որոնք կազմում են իմաստային մի առանձին դաշտ<sup>2</sup>:

Իմաստային այս դաշտի դարձվածքային միավորների հիմքում ընկած են «գլուխ», «սիրտ», «աչք» և «արյուն» բառերի՝ որպես կենսականորեն կարևոր օրգանների և օրգանիզմի կենսահեղուկի փոխանվանական իմաստները: Դարձվածքների հիմնական իմաստներն են մահը, կյանքը գոհաբերելը, մահից փրկվելը, ողջ, կենդանի, ինչպես նաև վնասից գերծ լինելը: «Արյուն» բաղադրիչով դարձվածքներից մի քանիսն էլ արտահայտում են վրիժառոթյամբ, թափված արյունը արյամբ հատուցելու, ինչպես նաև արյունահեղության ու զանգվածային կոտորածի իմաստներ: Մահվան իմաստը որոշակիանում է մահապատժի տարբեր ձևերի պատկերներով: Չնայած «մահ», «մեռնել» բառերը որևէ լեզվի որևէ դարձվածքում չեն գործածվում, բացառությամբ հայերենի մեկ-երկու դարձվածքի, օրինակ՝ գլուխը մահի/մահու տալ, աչքը բաց մեռնել, գլուխդ մեռնի, իմաստային այս դաշտի դարձվածքներից շատերն արտահայտում են կամավոր կամ բռնի մահվան իմաստ: Հիշյալ բառերը  
են

---

<sup>1</sup> Селезнева Г. Я., *Семантические категории сопоставительного изучения русского языка*, Воронеж, 1986, с. 72.

<sup>2</sup> Վերոնշյալ իմաստային դաշտին պատկանող դարձվածքները և դրանց բացատրությունները վերցրել ենք հետևյալ բառարաններից՝ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980, Սուքիասյան Ա., Գալստյան Ս., *Հայոց լեզվի դարձվածքանական բառարան*, Ե., 1975, *Англо-русский фразеологический словарь (составил А.В. Кунин)*, т. 1-2, М., 1967; *Фразеологический словарь русского языка*, под ред. Молоткова А. И., М., 1978; *Квеселевич Д. И., Русско-английский фразеологический словарь*, М., 1998, *Brewer's Dictionary of Phrase and Fable*. London, 1956, *The Old English Dictionary*, vol. 1-12, Oxford, 1961.

մեղմասական արտահայտություններով, որ պատկերավոր կերպով հաղորդում են նշված իմաստները:

Իմաստային այս դաշտը որոշակի տարբերություններով առկա է հայերենում, ռուսերենում և անգլերենում: Տարբերությունները հիմնականում նկատելի են տարբեր լեզուների ենթադաշտերում: Որոշ դարձվածքներ էլ իրենց որոշ իմաստներով այլ իմաստային դաշտերում են, ուստի ստորև կբերենք միայն տվյալ դաշտին բնորոշ իմաստները: Իմաստային այս դաշտը պայմանականորեն կարելի է բաժանել մի շարք ենթադաշտերի՝

**ա) մահանալու, զոհաբերվելու, կյանքը վտանգի ենթարկելու իմաստ արտահայտող դարձվածքներ՝**

Գլուխը ետ դնել (մեկի կամ մի բանի համար) - կյանքը չխնայել մեկի համար, իր անձը նվիրել, զոհաբերել մեկի կամ մի բանի համար: Այն ձեր համար գլուխները ետ դրած իշխանները ձեզ շատ են սիրում, նրանք չեն ցանկանալ, որ ամեն բանով դուք վնասվիք (ՊՀ, 188):

Գլուխը կոտրել - ջարդուփշուր լինել, հաշմանդամ դառնալ, կործանվել: Այստեղ պալատից, գնդանից և զավակներին պատանդ ու գերի թողնելուց հետո այդ խարդավանքների ու գլուխ կոտրող նրբաշավիղիների ընթացքը անդունդների եզրով հիմա սարսափելի դառավ (ԴՎ, 468):

Գլուխը մատաղ տալ - իրեն զոհաբերել, իրեն զոհ մատուցել: -Ես, իմ գլուխս օրենքին մատաղ կտամ, սրանց տեղակ Սիբիր կերթամ, թե որ սրանք փախչին (ՊՀ, 283):

Գլխից անցնել/անց կենալ - կյանքից հրաժարվել, կյանքից ձեռք քաշել, կյանքը չխնայել: Մենք գլխներիցս անցած մարդիկ ենք, իշխաններ, մեզ մահով չես վախեցնի (ԴՎ, 345):

Գլուխը զոզը (փեշը) դնել (ժողովրդ.) - հանուն մի բանի կյանքը վրտանգի ենթարկել, զոհաբերել: Թողնում է տունուտեղ, հերն ու մեր, գլուխը փեշն է դնում, գնում, որտեղ ես, Ոսկի քաղաք, քեզ եմ գալի (ԹԵ, V, 255):

Գլուխը կորչել - անձը վտանգի ենթարկել, վտանգի մեջ լինել: -Թե չէ, երբ որ տեսաք, որ ճար չկա, ձեր գլուխը պտի կորչի... գյուլլա բանեցրեք (ՊՀ, 258):

Գլուխը գետին դնել - մեռնել, զոհվել: Էսօր, որ գլուխս դնիմ գետինը, օղլուշաղս վլացք տենե, որ ապրի, ունենայի՝ կուտայի (ԹՎԵ, I, 123):

Գլուխը մահի/մահու տալ - 1. անձնասպանություն գործել: 2. կյանքը վտանգել, զոհաբերել: 3. զոհվել, սպանվել: -Մեկ քույր ունենք, թող չլինի, դա մեծ ցավ չէ, ինչո՞ւ մենք մեր գլուխը պետք է մահի տանք նրա համար (ԸԵ, IV, 211):

Գլուխը (ս. դ.) վկա (իմ, քո, նրա) - երդման արտահայտություն, ճշտությունը՝ իսկությունը հաստատելու համար կյանքով, արյունով վկայակոչելը: Իմ գլուխը, քո գլուխը վկա, որ իրեք տղա ունեմ, պուճուր աղջկանդ էլ պիտի տանեմ էստեղ պսակեմ (ՆՀ, 9):

Գլուխը տալ - 1. մի բանի համար կյանքը զոհաբերել, ոչինչ չխնայել, մեռնել: Նա շատ լավ գիտե, որ ես ձեզ համար եղբոր տեղ եմ բռնում

և պատրաստ եմ Հեղինեի համար գլուխս տալ (ՇԵ, 33): 2. գրագ գալ իր կյանքով: Դու իմաստուն մարդ ես, շատ մարդիկ ես տեսել, բայց ես իմ գլուխս կտամ, թե որ Միկիտան Մաքոյի պես մարդ տեսած ըլիս (ՊՀ, 373):

Աչքը բաց մեռնել - մի բանի կարոտ մեռնել, փափագին չհասնել:

Աչքը աշխարհի վրա փակել - մեռնել, հոգին ավանդել:

Մահը աչք(եր)ն առնել - մի վտանգավոր, բայց կարևոր, վճռական բան ձեռնարկել՝ կյանքը վտանգի ենթարկելով: Այդ տագնապալից պահին մի քանի հայ կտրիճներ, մահն աչքն առած, փողոցի մեջտեղ պառկեցին (ԹԱ, 24):

Միրտ հանգչել - թաղված լինել: Ծովի կողմից գեփյուռները շնկշնկալով գալիս ու փարվում էին թարմ հողաթմբին, որի տակ ազատատենչ սիրտ էր հանգչում (ԹԱ, 604):

Սրտի թելերը կտրվել - մեռնել: Նա այնպես տնքաց, կարծես սրտի թելերը կտրվեցին (ԶԵ, II, 464):

Արյուն թափվել - մարդ սպանվել: -Բայց էդ լա՛վ է, որ մի աղջկա համար այնքան արյուններ թափվեցան,- մեջ մտավ մի այլը (ԸԵ, I, 343):

Արյուն թափել - իրեն զոհաբերել, կյանքը չինայել: Այն ժամանակ բոլոր ցեղը իր արյունը կթափի և իր հյուրին թշնամու ձեռքը չի տա (ԸԵ, IV, 30): Մալդատը ձեր համար արյուն է թափում, դուք էլ նրա համար մի փոքր չարչարանք կրեցեք (ՊՀ, 195):

Արյամբ/ արյունով պաշտպանել - իր կյանքը չինայել մի բան պաշտպանելու համար: -Մեզ այսպես է վիճակված, պետք է միշտ պայքարով, արյունով պաշտպանենք մեր գոյությունը,- ասում էր Հայկը (ԹԱ, 579):

Արյունը տալ - կյանքը զոհաբերել: Թե թանաք է պետք փրկարար գործին՝ ի՞նչ թանաք, կտամ արյունս անգամ (ՍՊԵ, I, 377):

Մինչև արյան վերջին կաթիլը - մինչև մահ, քանի դեռ շնչում է: Հայրենի հողին ու ջրին կպած այդ խաղաղ լեռնականը վճռել էր մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել իր գյուղը, լեռնաշխարհը (ԹԱ, 354):

Արյան/ արյունի գնով կյանքի գնով: Իմ քաջ եղբայրներ, ձեր արյան և կյանքի գնով պաշտպանեցեք մեր ժողովրդին, մեր տունը, մեր պատիվը (ԹԱ, 24): -Քո արյունի գնովը պիտի ճարեմ էդ ազատությունը,- Սմբա՛տ (ՊՀ, 284):

Արյունը աչքն (աչքերն)առնել/ աչքի տակն առնել (ունենալ)(ժողովրդ.) - կյանքը մահվան վտանգի ենթարկել: Երբ էլ հնարավորություն չի լինում բնական պահանջին հաղթել, արյուններս աչքի տակ առած՝ դուրս ենք գալիս (ՊՀ, 254):

Արյունը հեղեղ լինել - արյունահեղություն լինել, շատ մարդ սպանվել: Կեսօր արինն ելավ հեղեղ, Քշեց, տարավ հազարավոր Մարդ ու դիակ ողջ միատեղ (ԹԵ, IV, 29):

Ջուրն արյուն դառնալ - ջուրն արյամբ է ծածկվել, ներկվել, բազմաթիվ զոհեր են եղել: Դարձել է աշխարհն, ախպեր, առ ու փախ, Սերը դարձել սուր ու ջուրը - արին (ԹԵ, III, 73):

Не сносить головы - ջխուսափել պատժից, հաշվեհարդարից, զոհվել, վախճանվել: Такой хитрец: ведь смекнул, что не сносить ему головы, если б он попался (ЛМГ, 19).

Подставить голову - գլուխը, կյանքը դնւ անել, հանձնել, զոհաբերել: Никто б в нашем полку не усумнился подставить ему своей головы (ПАД, 189).

Постоять головой - գլխով, կյանքով պաշտպան կանգնել մեկին, մի բանի: Уж постоим мы головою за родину свою (ЛМГ, 74).

Свернуть (себе) голову - մեռնել, վախճանվել, զոհվել: И люди движутся ощупью, вслепую, рискуя в любой канаве свернуть голову (ОНК, 64).

Сломать (себе) голову - կործանվել ինչ-որ բանի պատճառով, անհաջողության մատնվել: Мне-то что ж, какая забота, беру с великой радостью! Сломит себе голову - его дело (БИР, 271).

Заплатить головой - մեռնել, կյանքով հատուցել: Из-за вашего сна я чуть-чуть головой не заплатился (ААН, 148).

Голова слетит с плеч - զոհվել, մեռնել: И прежде чем я оглянулся, Уж голова слетела с плеч (ПАП, 75). Везде главы слетают с плеч, И с воплем строй на строй валится (ПАП, 111).

Голову продать - հանձնվել, իրեն զոհաբերել: Не отдаст он меня, он чует носом-то своим, что я свою голову дешево не продам (ОАП, 92).

Давать голову на отсечение - գլխով երաշխավորել, երաշխավորել կատարյալ համոզվածությամբ: Да я голову на отсечение дам, если он вас уже не надул и уже не обдумал, как бы вас еще дальше надуть (ДФИ, 221).

Смежить глаза - մեռնել:

До последней капли крови - մինչև մահ, մինչև վերջին շունչը: -Не за бабенок, а за права женщин, которые поклялись защищать до последней капли крови (ГИС, V, 430).

Лить/ проливать - զոհաբերել, սպանել մեկին, արյունը թափել: И если меня убьют или прольют мою кровь, неужели она пере-

шагнет через наш барьер? (ДФБ, 276). Я, так сказать, всю кровь мою за него готов хоть сейчас излить (ДФИ, 474).

Get/put one's head into a noose (բառացի՝ գլուխը օղակի մեջ մտցնել) - օղակն իր վիզն անցկացնել: Let him once get his head into the painter's noose, and there would be not one but many chances (GJS, 226).

A bet above one's head (բառացի՝ գրագ մեկի գլխի վրա) - գլխով, կյանքով գրագ գալ: "All that is a bet above my head, old boy" (MWC, 156).

Put one's head under the gas (բառացի՝ իր գլուխը գազի տակ դնել) - ինքնասպանություն գործել: There had surged into his mind the certainty that sooner than tell her the truth he would put his head under the gas! (GJS, 55):

Close one's eyes (բառացի՝ փակել աչքերը) - մահանալ, աչքերը հավերժ փակել:

Give one's life's blood to (բառացի՝ արյունը տալ) - արյուն թափել ինչ-որ բանի համար:

Shed one's blood (բառացի՝ արյուն թափել) - կյանքը տալ մի բանի համար:

Այս ենթադաշտում տեղ են գտել նաև մի քանի այլ դարձվածքներ՝ գլուխ դնել (մեռնել, իր անձը զոհաբերել (մյուս իմաստներով դարձվածքն այլ դաշտում է), գլուխը դնել (մեռնել, սպանվել, կյանքը զոհաբերել), գլուխն ուսերին չպահպանել/չպահել (չսպրել, սպանվել, մեռնել), գլուխը հողի մեջ մտնել (թաղվել, գերեզման դրվել), գլուխը կացնի տակ դնել (կյանքը վտանգի ենթարկել, իր կյանքը զոհաբերել), գլխով ու ոտքով կորչել (կործանվել), գլուխը թողնել (կյանքը տալ, սպանվել, զոհաբերվել, գլուխը ետ դնել), գլուխը ցած դնել (կյանքը զոհաբերել, մեռնել, գլուխը ետ դնել, գլուխը վայր դնել), գլխին ժանտախտ իջնել (բնաջնջվել, կոտորվել), գլխին սուր կախվել (մեկի) (մահվան սպառնալիքի տակ լինել), գլխով հատուցել (որպես հատուցում կյանքը տալ, զոհվել), գլուխը վտանգի տակ (մեջ դնել) թողնել (կյանքը վտանգել), գլուխը սրի տակ դնել/լինել (մահվան վտանգի մեջ ընկնել/ լինել), գլխով երաշխավորել (իր կյանքը որպես գրավական առաջարկել), գլխով պատասխանատու լինել (կյանքով՝ գոյությունը պատասխանատու լինել), գլուխս կտրել կտամ (երդման ձև. մի բանի ճշտությունը ապացուցելու համար պատրաստ է իր գլուխը կտրել տալու), գլուխը թռչել (սպանվել, զոհվել, գլխատվել), կյանքը նվիրաբերել, պատերազմում վիրավորվել, արյան մեջ նետել իրեն (նետվել),- Կյանքը չինայել, կովի մեջ մտնել, совать голову в петлю, сунуть голову в петлю (կախվել), отвечать головой (գլխով պատասխան տալ, կյանքով հատուցել), рисковать головой (կյանքը վտանգի ենթարկել), класть голову (մեռնել, զոհվել, վախճանվել), ручаться головой (գլխով, կյանքով երաշխավորել), в

свою голову (հնգ.), (անձնական պատասխանատվությամբ, սեփական հաշվեցողությամբ),

ставить голову под топор (զլուխը կացնի տակ դնել), смывать кровью,- смыть,- գոհաբերել,- մեղքը քավել իր կյանքի գնով, heads will roll (բառացի՝ գլուխները կզլորվեն - գլուխները կհատվեն, մեկը կպատժվի), I'll eat my head (խսկց.) (բառացի՝ ես գլուխս կուտեմ - գլուխս կտամ, գրագ եմ գալիս), cost smb. his head (բառացի՝ մեկին իր գլուխն արժենալ - կյանքը, գլուխն արժենալ, գլխով, կյանքով հատուցել), risk one's head/neck/skin (բառացի՝ գլուխը/վիզը, կաշին ռիսկի ենթարկել - կյանքը վտանգի ենթարկել), put one's head into the lion's mouth (բառացի՝ իր գլուխը մտցնել առյուծի բերանը - իրեն վտանգի ենթարկել):

Այս ենթադրաշտում դարձվածքներն ունեն որոշ իմաստային նրբերանգներ, ընդ որում, հարկ է նշել, որ տարբեր լեզուների դարձվածքներում դրանք արտահայտվում են տարբեր կերպ, այսպես, օրինակ՝ մեռնելու, իրեն գոհաբերելու նրբիմաստը հանդիպում է հայերենում և ռուսերենում (զլուխը դնել, գլուխը ետ դնել, գլուխը թողնել, գլուխը մատաղ տալ, գլուխը ցած դնել, գլխից անցնել, գլուխը գետին դնել, գլուխը տալ, подставить голову, класть голову, свернуть (себе) голову, голова слетит с плеч, голову продать), սպանվելու, կործանվելու նրբիմաստը առկա է դարձյալ հայերենում և ռուսերենում (զլուխը կտրել, գլուխն ուսերին չպահպանել, գլխով ու ոտքով կորչել, գլուխը մահի/մահու տալ, не сносить головы, сломать (себе) голову): Թաղում և բնաջնջում ու կոտորած իմաստներն առկա են միայն հայերենում (զլուխը հողի մեջ մտնել, գլխին ժանտախտ իջնել), իսկ հաջորդ չորս նրբիմաստներն առկա են բոլոր երեք լեզուներում՝ վտանգ, սպառնալիք (զլուխը կացնի տակ դնել, գլուխը գոգը/փեշը դնել, գլուխը կորչել, գլխին սուր/թուր կախվել/շողացնել, գլուխը վտանգի մեջ/տակ դնել, գլուխը սրի տակ դնել, գլուխը մահի տալ, рисковать головой, risk one's head, put one's head into the lion's mouth), հատուցում (գլխով հատուցել, отвечать головой, заплатить головой, cost smb. his head), անձնասպանություն (զլուխը մահի/մահու տալ. ի դեպ, ինչպես նկատում ենք, հիշյալ դարձվածքն արտահայտում է տարբեր նրբիմաստներ. совать/сунуть голову в петлю, get/put one's head under the gas), կյանքով երաշխավորելը, վկայակոչելը, գրագ գալը (գլխով երաշխավորել, գլխով պատասխանատու լինել, գլուխս կտրել կտամ, գլուխը վկա, в свою голову, давать голову на отсечение, I'll eat my head, a bet above one's head), փափագին չհասած մեռնելը (աչքը բաց մեռնել):

բ) Մպանություն, մահապատժի իմաստ արտահայտող դարձվածքների ենթադաշտ:  
Գլուխ կտրել - սպանել, վիզը կտրել: Դու քո հոր անումը աշխարհքի միջին մի մատը մեղրի հետ կհավասարես, ու էդ տղի էլ գլուխը կկտրիս (ՊՀ, 102):

Գլուխը թոցնել - գլխատել, սպանել: -Լավ կլինի բոլորի գլուխներն էլ միանգամից թոցնել, ազատվել, - հայտարարեց բանտապետը (ԹԱ, 218):

Գլուխը տափը դնել (բրբ.), նույնն է՝ գլուխը թաղել: -Ա՛յ, տափը դնեմ նրա գլուխը, - վրդովված բացականչեց բարի պատավը (ՆՊ, 32):

Գլուխը/գլուխդ կրել/կրեմ (բրբ.), նույնն է՝ գլուխը հողել, գլուխը թաղել: -Կրի՛մ քո գլուխն ըսհա՛ (ՄԵ, 292):

Գլուխը աղալ/աղը դնել - սպանել, ոչնչացնել, գլուխն ուտել: Ընդուց ետը ես գիտեմ, թե մեր գեշ նշանածի գլուխը ոնց եմ աղը դնում, գնում ու մի ուրիշ սիրուն, լիտիկ, ազափ աղջիկ առնում (ՊՀ, 183):

Գլխից էլ ազատվել, գլխացավից էլ - որևէ բանի պատճառը վերացնելով՝ ազատվել վատ, տհաճ հետևանքից, անախորժությունից, սպանել, ոչնչացնել: -Իսկ չի՞ լինի տեր մարգպան, գլխից էլ ազատվենք, գլխացավից էլ... մի սրի հարվածով... (ԴՎ, 472):

Հողը գլխիս/գլխիդ/գլխին - անեծք՝ մեռնեմ/մեռնես/մեռնի՛ - նշանակությամբ: - Վա՛յ, հողն իմ գլխին, խայտառակվեցինք... Վայ քոռանա՛մ... Ի՞նչ պըտի ասեմ մորը... (ԶԵ, II, 85):

Գլուխը հողել / գլուխդ հողեմ - 1. անեծք՝ մեռնես, թաղեմ քեզ նշանակությամբ: 2. թաղել: -Ձենդ կտրի, հողեմ նրա գլուխը, - եղավ մորս պատասխանը (ԶԵ, II, 86):

Գլուխն ուտել - սպանել, ոչնչացնել, կործանել: -Ուզում էիր գլուխս ուտե՞լ,- ասում է ձկնորսի տղան ու թագավորին բոթում, ջուրն է գցում, խեղդում (ՆՀ, 33): Լավ, ասինք թե նա մութթա փուղ ունե (գլուխն ուտե իրա փուղը), այնումը չի գցում ու տալիս է, բաս խիղճ քասիբ-քուսուրն ի՞նչ անե (ԲԵ, III, 93):

Արյուն թափել - արյունահեղություն, սպանություն, կոտորած գործել: Նրանք սիրում էին գռփել,կողոպտել, թալանել, արյուն թափել, և դա դարձել էր նրանց համար արհեստ, զբաղմունք (ԹԱ, 14): Ով որ արյուն թափելու և մարդիկ կոտորելու ընդունակություն չունի, նրան ասում են՝ դու ազատ լինելու իրավունք չունես (ԲԵ, IV, 256):

Արյունով ծածկել - արյունով ողողել, կոտորել, սպանել: -Գնանք հայրենիք և մեր արյամբ ծածկենք մեր մեղքը, թող ուրիշներն արդար խղճով ապրեն (ԴՎ, 425):

Արյունով ներկել/ շաղախել - 1. սպանել: 2. արյուն թափել, զոհել: Շատ սարսռալի դեպքեր են կատարվել նրա շուրջը, և քանի-քանի անգամ են արյունով ներկվել նրա փեշերը (ԹԱ, 71):

Արինը վեր ածել - արյուն թափել, արյունահեղություն կատարել: Նրանք մեր ազգի արինը շատ են վեր ածել, մեկ օր էլ մենք նրանց արինը վեր ածենք (ԱՎ, 71):

Արյուն ոթել - արյուն թափել: Երկուստեք խմբերը դարձել հրձիգներ վայրագ, արյունն են ոթում արանքում գյուղերի (ԲԵ, 63):

Արյունը ջուր դառնալ - սպանությունն ու արյունահեղությունը սովորական բան դառնալ: Վերից մի կապարե երկինք էր ծանրացել. Արյունը՝ ջուր դարձել, ջուրը՝ դարձել արյուն (ՍՊԵ, I, 114):

Արյունը թափել - արյունահեղություն անել, սպանություն գործել: - Դե՛, դեն՛,- գոռաց Գեղեճը,- հայրենիի կովին լաց չկա, հիմա արյուններդ կթափեմ, հա՛, դե՛՛,- գոռաց

Գեղեճը,- հայրենիի կովին լաց չկա, հիմա արյուններդ կթափեմ, հա՛ ... (ԴՎ, 547): Արյան բաղ(ա)նիք - արյունահեղություն, զանգվածային սպանություն: Մարդկային աշխարհ, արյան բաղանիք, ուր թույլն է հանցավոր և հզորն՝ արդար: Ուր մն

աց տխեղձ՝ ինչ որ անում է այս գորշ աշխարհում՝ սոսկ նյութի համար (ԲԵ, II, 71): Արյուն գնալ - Արյուն թափվել, զոհեր արյունահեղո

ւթյուն լինել: Ափսո՛ս, առաջ պիտի անեի, ուշացա, այսքան արյունը գնաց (ԴՎ, 831): Արյուն առնել/թողնել

- սպանություն կատարել: -Ժամն է արյուն առնելու,- ասաց Դենշապուհը (ԴՎ, 494): Արյուն անել/թափել/հանել/վերածել/քցել (խսկց.) - արյունահեղություն անել, սպանություն գործել:

Ախպեր, ասեցիք, ինչ արիք իրար, Խոսք եք կովացրել, արին հո չարիք (ԹԵ, III, 75): Արյան մեջ խեղդել - սպանությամբ լռեցնել, հրի և սրի մատնել, ոչնչացնել: Սակայն ցարակա

ն բռնակալությանը հաջողվեց արյան մեջ խեղդել ժողովրդի արդար ցասումը (ԹԱ, 179): Արյան ծով - արյունահեղություն, զանգվածային զոհեր ու կ

սոտրածներ: Թո՛ղ երկրները պատերազմեն, սակայն առանց արյան ծովի (ՍՊԵ, I, 353): Արյան հոտ գալ/փչել - 1. սպանության վտանգ սպասվել: 2. սպանություն կատարել: Եղբայր քեզան

Взять голову (чью-то) (за что-то) - գլխատել, կյանքից զրկել: Конечно, нарушена буква закона и пролита кровь, ну и возьмите за букву закона мою голову (ԴՓՍ., 520).

Снять голову - սպանել: Если бы кто другой мне это сказал про тебя, то я бы тут же собственными руками мою голову снял (ԴՓԻ, 472).

Свернуть голову - սպանել, ոչնչացնել: Малый совсем от рук отбился, в чужих людях, думаю и совсем, голову свернет (ԲԻՐ, 282).

Оторвать голову - սպանել, գլուխը կտրել, պոկել: Может, это и лучше. В дороге могут нащупать - голову оторвут (ՕՆԿ, 97).

Сорвать голову (ժողովրդ., խսկց.) - մեկին սպանել: Презренный, дай себя догнать! Дай голову с тебя сорвать (ПАП, 47).

Обагрять руки в крови - ձեռքերն արյունով շաղախել, սպանություն կատարել: От ликующих, праздно болтающих руки в крови (ННС, VII, 142).

Напиться/насосаться крови - արյունը ծծել, սպանել, մեկին: “Нет, брат ворон; чем триста лет питаться падалью, лучше раз напиться живой кровью, а там что бог даст!” (ПАК, 93).

Head money (բառացի՝ գլխի փող) - գլխագին:

Put/set/place a price on smb.'s head (բառացի՝ մեկի գլխի վրա գին դրնել) - մեկի գլխի համար պարզև խոստանալ:

Suck smb.'s blood (բառացի՝ մեկի արյունը ծծել) - սպանել մեկին: This - he said-was characteristic of England, the most selfish country in the world; the country which sucked the blood of other countries (CJL, 143). They have sucked the very blood out of me (САН, 464).

Այս ենթադաշտում տեղ են գտել նաև հետևյալ դարձվածքները՝ գլուխն առնել (գլխատել), գլուխը կապարով լվալ/լցնել (հրազենով սպանել), գլուխը զարկել (ժողովրդ.) (գլխատել, գլուխը կտրել), գլուխը սրխտորել (բրբ.) (սպանել, անհետ կորցնել), գլուխը/գլուխը թաղեմ (անեծք՝ մեռնես՝ քեզ թաղեմ նշանակությամբ), գլուխը ուլորել (մեկի) (սպանել), գլուխը(դ) մեռնել (մեռնի/չմեռնի) (անեծքի և երդման արտահայտություն՝ մեռնես նշանակությամբ), գլուխը սատկել (անեծքի ու անարգանքի արտահայտություն՝ մեռնել նշանակությամբ), գլխին թուր/ սուր շողացնել/կախել (սպառնալ, մահվան սպառնալիք ստեղծել), գլուխը երկանք աղալ (սպառնական արտահայտություն՝ խոշտանգել, տանջել, տանջամահ անել իմաստով), գլուխը խաշել (բրբ.) (սպանել), սրտի թելերը կտրել (սպանել), արյունը ծով անել (սպանել), գլուխը պատռել (սպանել), հողը արյունով ներկել (մարդ սպանել), արունք ծով անել (բրբ.-շատ մարդկանց սպանել, արյունահեղություն անել), արյունով ողողվել/ոռոզվել (շատ զոհեր տալ, կոտորվել), արյունի մեջ թրև ածել (խսկց,- սպանել), արյունը տանել (զանգվածային սպանություն՝ կոտորած լինել), արյուն կապել (արյունահեղություն անել, արյունով ողողել), արյուն գցել (բրբ.- արյունահեղություն անել, մարդ սպանել), արյան մեջ լողալ/ լողանալ (արյունահեղություն գործել, մեջտեղ արյուն խաղալ), купаться/утопать в крови (արյան մեջ լողալ, խեղդվել), пускать/пустить кровь (մեկի արյունը թափել, մեկին սպանել), топить/потопить в крови (արյան մեջ խեղդել, արյունահեղություն անել), умываться/умыться кровью (արյունով լվացվել, մեկի արյունը թափել), the bath of blood (արյան բաղնիք, կոտորած), blood will be spilled (գործը, բանը լավ ավարտ չի ունենա,

արյուն կթափվի), drown in blood (արյան մեջ խեղդել), shed blood like water (արյուն թափել, հեղեղել), shed smb.'s blood (մեկի արյունը թափել, սպանել), taste blood (արյան համը տեսնել, սպանել):

Այս ենթադաշտի դարձվածքներն ունեն իրենց մի քանի նրբիմաստները, որոնք դարձյալ առկա են տարբեր լեզուներում, այսպես՝ մահապատժի ենթարկ(վ)ելը (գլուխը թռչել, գլուխ(ը) կտրել, գլուխն առնել, գլուխը զարկել, գլուխը թոցնել, взять голову, heads will roll), սպանություն (գլուխը կապարով լվալ/լցնել, գլուխ պատռել, գլուխը սխտորել, գլուխը ոլորել, գլուխը աղալ/աղը դնել, գլուխն ուտել, գլուխը խաշել, սրտի թելերը կտրել, снять голову, свернуть голову, оторвать голову, сорвать голову), գլխագին նրբիմաստն առկա է միայն անգլերենում (head money, put / set / place a price on smb.'s head), իսկ անեծքները հանդիպում են միայն հայերենում (գլուխը/գլուխը թաղեմ, գլուխը տափը դնել, գլուխը թաղել, գլուխը/գլուխդ կրել/կըրեմ/հողել/հողեմ, գլուխդ մեռնի/չմեռնի, գլուխը սատկել, հողը գըլխիս/գլխիդ/գլխին): Նկատելի են նաև արյունահեղության, կոտորածների նրբիմաստները:

**գ) Կյանքը փրկելու, վտանգից խուսափելու, ողջ ու անվնաս լինելու իմաստ արտահայտող դարձվածքներ:**

Գլուխը ողջ լինել՝ ողջ մնալ ողջ պահել - 1. կենդանի մնալ, ողջ լինել/մնալ: 2. բարեմաղթություն՝ կենդանի՝ ողջ լինել նշանակությամբ: Թող իրենց գլուխները ողջ պահեն իմ տանը (ԴՎ, 890):

Գլուխն ուսերին լինել - կենդանի, ողջ լինել: -Միայն այդ կուզեի տեսնել՝ քանի դեռ գլուխս ուսերիս է, իսկ արքաներին, տեր արքա, չեն վախեցնում (ԴՎ, 774):

Գլխից անպակաս - ողջ, կենդանի, մշտապես հովանի: Նրա շուքը միշտ հանապազ մեր գլխիցը անպակաս (ԹԵ, IV, 53):

Գլխին(ց) անպակաս լինել/լինես - 1. ողջ, կենդանի լինել (իբրև հովանի): 2. բարեմաղթություն՝ մեկին ողջություն ցանկանալ: Փառք ամենակալին, որդի, դու մեր գլխին անպակաս որ լինես քաջառողջ ենք ու կանք (ԴՎ, 329): Ձեզ էլ շնհավոր բարիկենդան, ամեն տարի էս վախտը հասնիք, մեր գլխիցը ոչ պակսիք (ՊՀ, 62):

Գլուխը պրծացնել (խսկց.), նույնն է՝ գլուխն ազատել: -Թե մարդ ես՝ գլուխդ պրծացրու, Քաջ Նազարը ծառեր արմատահան անելով գալիս է (ԹԵ, V, 244): -Համա իմացած կա՛ց, պստիկ բզեզին էլ, որ ուզում ես բռնել, նա իր գլուխը պրծացնելու համար աշխատում ա մարդ կծելու (ՊՀ, 278):

Գլուխ(ն) ազատել - մի բանից փրկվել մի կերպ, մի վտանգավոր բանից փախչել, խուսափել, կյանքը փրկել: Ես իմ քեռու աղջկա պատկառանքը պահելու ու մեր գլուխն ազատելու համար եմ արել (ՊՀ, 265): Մարդ հարկավոր չէ, տեր իմ, նրա պատճառով իրեն էլ կսպանեն, ինձ էլ. մենակ որ լինեմ գլուխս կազատեմ (ԴՎ, 306):

Спасать голову - գլուխն ազատել, փրկվել: Keep one's head down (բառացի՝ իր գլուխը ցած պահել) - վտանգից կամ ավերումից խուսափել: Այս ենթադաշտում տեղ են գտել մի քանի այլ դարձվածքներ՝ գլուխը ողջ (կենդանի, ողջ), գլխին մնալ/լինել/կենալ (մեկի) (գլխից ան-պակաս լինել), գլխից անպակաս անել (ողջ, կենդանի պահել), գլուխը ձկան խաչ կար, (բրբ.) (ասվում է մեկի մասին, որ հրաշքով ազատվում է անխուսափելի թվացող վտանգից), գլուխը (ն.ս.դ.) ապրի (բարեմաղթություն՝ մեկին կյանք ցանկանալու մաղթանք), գլխից ամպերը ցրել (սպառնացող, վերահաս վտանգից զերծ պահել): Այստեղ էլ նկատվում են մի շարք իմաստային նրբերանգներ՝ կենդանություն, ողջություն (գլուխը ողջ մնալ/պահել/լինել, գլուխը ուսերին լինել, գլխին մնալ, գլխին/ց անպակաս լինել, գլուխը (ն.ս.դ.) ապրի), փրկություն, ազատում, վտանգից խուսափում (գլխից ամպերը ցրել, գլուխը պրծացնել, գլուխ(ն) ազատել, спасать голову, keep one's head down:

Մեկ այլ ենթադաշտ էլ պարունակում է այնպիսի դարձվածքներ, որոնք ունեն արյունն արյամբ հատուցելու, արյան դիմաց վրեժ լուծելու, արյանը սպանությամբ պատասխանելու, հատուցելու իմաստներ, օրինակ՝ արյունով լվանալ/լվանալ (արյունով հատուցել, պատիվը վրիժառությամբ վերականգնել): Իսկ եթե որևէ աղետ է պատահել նրա հոգուն, եթե ուրացել է նա հայրենիքը և իրեն՝ այն ժամանակ նա, Մամիկոնյան տիկինը, իր արյունով կլվա նրա անարգանքը (ԴԴ, 578), արյունը արյուն ուզել (արյունը արյունով լվանալ/մաքրել), արյունը արյունով լվանալ/մաքրել (սպանության վրեժը սպանությամբ լուծել), արյունը առնել (մեկից) (մեկից վրեժ լուծել, արյունը արյունով լվանալ), արյան դիմաց արյուն թափել (արյունը արյունահեղությամբ պատասխանել), արյուն ընդ արյան (գրք.) (արյունը արյունով լվանալ), արյան փոխն առնել (խսկց.) (արյան վրեժն առնել), кровь за кровь (արյուն արյան դիմաց, վրեժխնդրություն, սպանություն սպանության դիմաց), bathe in blood (արյունոտ հաշվեհարդար տեսնել) և այլն: Իմաստային այս դաշտում տեղ գտած դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Դրանք մեծ մասամբ բայական երկանդամ, եռանդամ և բազմանդամ կառույցներ են: Հայերենում տեղ են գտել նաև մի շարք եղանակավորող, մեկ հաղորդակցական և մեկ-երկու ածականական, ռուսերենում՝ մեկ մակբայական, իսկ անգլերենում՝ մեկ գոյականական դարձվածքներ: Դրանցում գործում են քերականական տարբեր՝ թե՛ անվանական, թե՛ բայական կարգեր, որոնցից մի քանիսն ունեն իմաստազատիչ դեր, մինչդեռ մյուսները զուրկ են այդպիսի դերից: Դարձվածքների բաղադրիչների միջև շարահյուսական կապերն արտահայտվում են ըստ ուսումնասիրվող լեզուների տիպաբանական առանձնահատկությունների:

Երեք լեզուների ենթադաշտերում հանդիպում են նաև դարձվածքային տարբերակներ՝ քերականական, բառային, ոճական և այլն: Բերենք մի քանի օրինակ՝ գլուխ/գլուխը դնել (բառային), գլուխը գոգը/փեշը դնել (բառային), գլուխը աղալ/աղը դնել (բառային), գլուխը սրի/թրի տակ դնել (բառային), գլուխը հողել/թաղել (բառային), գլուխն ուսերին չպահպանել/չպահել (բառային, քերականական), գլուխը ցած/վայր դնել (բառային), գլուխը մահի/մահու տալ (բառային), գլուխը կապարով լվալ/լցնել (բառային, ոճական), գլուխը հողը/տափը դնել (բառային և ոճական), գլուխը ողջ մնալ/լինել (բառային), գլխից անպակաս լինել/լինես (բառային), совать/сунуть голову в петлю (բառային), отвечать/ответить головой (քերականական), голова слетит (с плеч) (քերականական), get/put one's head into a noose (բառային), put/set/place a price on smb.'s head (բառային), մահն աչք(եր)ն առնել (բառային), սրտի թելերը կտրել/կտրվել (քերականական), արյունով լվալ/լվանալ (քերականական) և այլն:

Ենթադաշտերում նկատելի են դարձվածքային հոմանիշներ, ինչպես՝ գլուխը դնել - գլուխը ետ դնել - գլուխը թողնել - գլուխը մատաղ տալ - գլուխը ցած դնել, գլուխը գոգը դնել - գլուխը տալ - գլուխը մահի տալ, գլուխն ուսերին չպահել - գլխով ու ոտքով կորչել - գլխին ժանտախտ իջնել - գլուխը գետին դնել, գլուխը կացնի տակ դնել - գլուխը վտանգի տակ դնել - գլուխը սրի տակ դնել - գլխին թուր շողացնել, գլուխս կտրել կտամ - գլուխս վկա, գլխով հատուցել - գլխով պատասխանատու լինել - գլխով երաշխավորել, գլուխն առնել - գլուխը կտրել - գլուխը զարկել - գլուխը թոցնել, գլուխը կապարով լցնել - գլուխը պատռել - գլուխը սխտորել - գլուխը ոլորել - գլուխը աղալ - գլուխն ուտել - գլխից էլ ազատվել, գլխացավից էլ, գլուխդ թաղեմ - գլուխդ մեռնի - գլուխդ հողեմ - գլուխը սասկել - հողը գլխին (ս.դ.) - գլուխը երկանք աղալ, գլուխը տափը դնել - գլուխը հողի մեջ դնել - գլուխը թաղել, գլուխը ողջ լինել - գլուխն ուսերին լինել, գլխից անպակաս լինել - գլխին մնալ, գլուխը պրծացնել - գլուխն ազատել, մահն աչք(եր)ն առնել - մահն աչքի առաջ/տակ առնել, աչքը աշխարհի վրա փակել - աչքերը խփել, արյուն թափ(վ)ել/ ոթել - արյուն հեղել - արյուն գցել - արյուն կապել - արյունի մեջ թրև ածել - արյունը ծծել - արյուն առնել - արյուն անել, արունք ծովա անել - արյան մեջ խեղդել - ջուրն արյուն դառնալ - արյան բաղանիք - արյունով ծածկել - արյունը ջուր դառնալ, արյունը արյունով լվանալ - արյունով լվալ - արյան փոխն առնել - արյուն ընդ արյուն, արյան մեջ նետել (իրեն) - արյունը տալ - արյան գնով - մինչև արյան վերջին կաթիլը - արյունով պաշտպանել, не сносить головы - класть голову - голова слетит (с плеч), свернуть (себе) голову - сломать (себе) голову; отвечать головой - заплатить головой; подставить голову - голову продать; взять голову - снять голову - свернуть голову - оторвать голову - сорвать голову; ручаться головой - давать голову на отсечение; лить/пролить кровь - умываться в крови

- пускать/пустить кровь - обагрять руки в крови; смывать кровью - до последней капли крови; risk one's head - put one's head into the lion's mouth; get/put one's head into a noose - put one's head under the gas; head money - put / set /place a price on smb.'s head; suck smb.'s blood - shed smb.'s blood - bathe in blood; drown in blood - the bath of blood; give one's life's blood to - shed one's blood.

Ինչպես նկատում ենք, եթե ռուսերենի (բացառությամբ վերջին շարքի) և անգլերենի շարքերը երկանդամ են, ապա հայերենի հոմանշային շատ շարքեր բազմանդամ են: Սա բնական է, քանի որ ամենահարուստն ու ծավալունը հայերենի ենթադաշտերն են:

Այս ենթադաշտերի ներսում տեղ չեն գտել հականիշ դարձվածքներ: Մակայն հարկ է նշել, որ դրանցից առաջինը և երկրորդն իրենց ընդհանուր իմաստներով կարող են համարվել հականիշ ենթադաշտեր, քանզի, եթե առաջինի դարձվածքներն ունեն մեռնելու, կյանքը կամովին զոհաբերելու՝ վտանգի ենթարկելու, ապա երկրորդի դարձվածքներն արտահայտում են կյանքից զրկելու, բռնի կերպով սպանելու իմաստ: Իրենց արտահայտած ընդհանուր իմաստով հիշյալ երկու ենթադաշտերը հակադրվում են երրորդին, որի ընդհանուր իմաստը կյանքը պահպանելը, փրկելը, ողջ ու անվնաս լինելն է: Երեք լեզուներում էլ դարձվածքները սերտաճումներ են և միասնություններ՝ անօտարելի և անփոփոխելի բաղադրիչներով: Անկախ կառուցվածքային տիպից, բոլոր դարձվածքների գլխավոր անդամներն իմաստային առումով գլուխ, սիրտ, աչք բառերն են: Ինչպես նշեցինք, «մեռնել», «մահ» բառերը տեղ չեն գտել դարձվածքներում, բացառությամբ հայերենում մեկ-երկու՝ անեծք և երդում իմաստներն արտահայտող՝ գլուխ/դ/մեռնի/մեռնել, գլուխդ չմեռնի և աչքը բաց մեռնել դարձվածքների: Եթե ռուսերենի և անգլերենի դարձվածքները մենիմաստ են, ապա հայերենի շատ դարձվածքներ երկիմաստ կամ բազմիմաստ են (խոսքը տվյալ ենթադաշտերին վերաբերող իմաստների մասին է):

Որոշ դարձվածքներ ունեն իրենց համարժեքները մյուս՝ մեկ կամ երկու լեզուներում: Սա, իհարկե, հիմնականում վերաբերում է առաջին՝ մեռնելու, կյանքը վտանգի ենթարկելու ու զոհաբերելու ենթադաշտին: Մեծ մասամբ այդ համարժեքները իմաստային բնույթ են կրում, օրինակ՝ գլուխը կոտրել - сломать (себе) голову, գլուխը ուներին չպահպանել/չպահել - голова слетит с плеч, գլուխը կացնի տակ դնել, գլուխը սրի տակ դնել - ставить голову под топор - put one's head into the lion's mouth, գլուխը թռչել - голова слетит, գլուխը գետին դնել, գլուխը ցած/վայր դնել - класть голову, գլխով պատասխանատու լինել - отвечать головой, գլխով երաշխավորել - ручаться головой - I'll eat my head, գլուխը մահի տալ - put one's head under the gas, գլխով հատուցել - заплатить головой - cost smb. his head, գլուխը վտանգի տակ դնել - рисковать головой - risk one's head, գլուխս կտրել կտամ - давать голову на отсечение, совать голову в петлю, - get/put one's head into a noose, գլուխը կրտրել/պոկել - оторвать голову, գլուխն առնել - взять голову, գլուխը ոլորել - свернуть голову, գլուխն աղալ/սխտորել - снять голову, գլուխ(ն) ազա-

տել/պրծացնել - keep one's head down, աչքերը խփել - смежить глаза - close one's eyes, արյան բաղանիք - the bath of blood, արյուն թափել - лить кровь - shed blood, արյունը ծծել - напиться/насосаться крови - suck smb.'s blood.

Ենթադաշտերում քիչ չեն նաև այն դարձվածքները, որ հանդիպում են միայն մեկ լեզվում՝ գլուխը դնել, գլուխը ետ դնել, գլխով ու ոտքով կորչել, գլուխը գոգր/փեշը դնել, գլխից անցնել, գլուխը մատաղ տալ, գլուխը վկա, գլուխը երկանք աղալ, գլուխը ուտել, գլխից էլ ազատվել, գլխացավից էլ, աչքն առնել, աչքը բաց մեռնել, սիրտ հանգչել, սրտի թելերը կտր(վ)ել, Не сносить головы, Подставить голову, Голову продать, Постоять головой, put/set /place a price on smb.'s head, head money, heads will roll և այլն:

Միայն հայերենում են առկա բարեմադրությունները և անեծքները՝ գլխից անպակաս լինես, գլուխդ ողջ լինի, գլուխդ ապրի, գլուխդ մեռնի, գլուխը թաղեմ, գլուխը հողեմ և այլն: Հարկ է նշել, որ, եթե նույնիսկ որոշ դարձվածքներ ունեն իրենց իմաստային համարժեքները մյուս լեզուներում, դիտարկված բոլոր դարձվածքներն էլ հատուկ են այն լեզվին՝ այն ժողովրդի լեզվամտածողությանը, որն օգտագործում է դրանք: Դիտարկված դարձվածքները, որ կազմված են փոխանունության ոճական հնարով, օգտագործվում են ժողովրդախոսակցական ոճում, բարբառներում, մամուլում, գեղարվեստական գրականության մեջ, սակայն լեզվի որ ոլորտում էլ կիրառվեն դարձվածքային այս միավորները, դրանք, մի կողմից, հատուկ են տվյալ լեզվին, մի հանգամանք, որ կարծում ենք՝ վկայում է հիշյալ դարձվածքների՝ դիտարկվող լեզուներում անկախաբար առաջացած լինելու մասին, մյուս կողմից՝ արտացոլում են դիտարկվող լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունը, այն է՝ գլուխը, սիրտը, աչքը և արյունը կենսականորեն անհրաժեշտ լինելու գիտակցումը:

#### Համառոտագրություններ

- ԱՎ - Աբովյան Խաչատուր, Վերք Հայաստանի, Ե., 1975:  
 ԲԵ - Բակունց Ակսել, Երկեր, Ե., 1986:  
 ԴՎ - Դեմիրճյան Դերենիկ, Վարդանանք, Ե., 1987:  
 ԶԵ - Զորյան Ստեփան, Երկերի ժողովածու, հ. II, Ե., 1960:  
 ԹԱ - Թորգոմյան Ծերուն, Անմար կրակներ, Ե., 1959:  
 ԹՎԵ - Թոթովենց Վահան, Երկեր 3 գրքով, գիրք I, Ե., 1988:  
 ԹԵ - Թումանյան Հովհաննես, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1-10, Ե., 1988-1996:  
 ԻԵ - Իսահակյան Ավետիք, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. II, Ե., 1974:  
 ՆՀ - Նազինյան Գրիգոր, Հայ ժողովրդական հեքիաթներ, Ե., 1995:  
 ՆՊ - Նար-Ռոս, Պատմվածքներ, վիպակներ, Ե., 1978:  
 ՇԵ - Շիրվանզադե Ալեքսանդր, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Ե., 1930:  
 ՊՀ - Պռոշյան Պերճ, Հացի խնդիր, Ե., 1968:  
 ՍԵ - Սունդուկյան Գաբրիել, Երկեր, Ե., 1984:  
 ՍՊԵ - Սևակ Պարույր, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. I, Ե., 1972:  
 ԲԵ - Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. I, III, IV, Ե., 1983-1984:  
 ААН - Афанасьев Александр, Народные русские сказки, М., 1982.  
 БИР - Бунин Иван, Рассказы, М., 1983.  
 ДФИ - Достоевский Федор, Идиот, М., 1981.

- ДФП - Достоевский Федор, Преступление и наказание, М., 1983.  
ДФБ - Достоевский Федор, Бедные люди, М., 1971.  
ЛМГ - Лермонтов Михаил, Герой нашего времени, стихи- поэмы., Е., 1984.  
ННС - Некрасов Николай, Собрание сочинений, т. 7, М., 1971.  
ОАП - Островский Алексей, Пьесы, М., 1982.  
ОНК - Островский Николай, Как закалялась сталь, Л., 1977.  
ПАД - Пушкин Александр, Драматические произведения, Проза, М., 1982.  
ПАК - Пушкин Александр, Капитанская дочка, М., 1965.  
ПАП - Пушкин Александр, Поэмы, М., 1982.  
ТИС - Тургенев Иван, Собрание сочинений в 12 т-х, т. 5, М., 1977-1978.  
САН - Cronin Archibald, Hatter's Castle, М., 191963.  
GJL - Galsworthy John. To Let, М., 1956.  
GJS - Galsworthy John. The Swan Song, М., 1956.  
GJW - Galsworthy John. The White Monkey, М., 1956  
MWC - Maugham W. S. Complete Short Stories, v. 1, 4, GB, 1980.

## СЕМАНТИЧЕСКОЕ ПОЛЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ СО ЗНАЧЕНИЕМ “ЖИЗНЬ”

КАЗАРЯН А. З.

### Резюме

В основе фразеологизмов этого семантического поля лежит метонимическое значение лексем “голова”, “глаз”, “сердце” и “кровь”. Основные значения этих фразеологизмов: умереть, рисковать жизнью, убить, а также спастись от смерти, быть вне опасности. К примеру, фразеологизмы со значением “умереть” конкретизируются различными образами, в которых показаны разные виды казни, иногда описывающие насильственную смерть. Данное семантическое поле с определенными различиями наблюдается в армянском, русском и английском языках. Изучение этих фразеологизмов выявляет некоторые сходства и различия между семантическими, стилистическими, структурными и грамматическими особенностями фразеологических единиц указанных языков, что свидетельствует об общности и различиях, существующих в языковом мышлении народов – носителей этих языков.